ՍԻՐԱՆՈՒՅՇ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿՐՈՆԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՍԻՍԱԿԱՆ» ԵՐԿՈՒՄ

Իր երկը գրելիս Սյունյաց մետրոպոլիտ և պատմիչ Ստեփանոս Օրբելյանն օգտագործել է նաև հարազատ նահանգի հետ կապված ժողովրդի մեջ կենցաղավարող պատմական ստուգաբանական ավանդությունները, վարքաբանական ավանդազրույցները, որոնք առավելապես կրոնական բնույթի են, և կապված են այս կամ այն եկեղեցու, պատմական դեմքերի ու իրադարձությունների հետ: Լինելով հոգևորական՝ Ս. Օրբելյանը ամեն ինչ ներկայացնում ու մեկնաբանում է եկեղեցու և կրոնի տեսանկյունից՝ շեշտադրելով եկեղեցու և քրիստոնեության հանդեպ անհատի դրսևորած հավատարմության ու նվիրվածության կարևորությունը: Երկն ամբողջությամբ կարելի է համարել ավելի շատ Սյունյաց Մետրոպոլիտական Աթոռի պատմություն, քան Սյունյաց աշխարհի: Այդ ամենով հանդերձ՝ Օրբելյանի «Սյունյաց պատմությունը» արժեքավոր է ժողովրդական բանահյուսության, մասնավորապես ավանդության ժանրի ուսումնասիրության տեսանկյունից:

Բանալի բառեր՝ *Սյունիք, ավանդազրույց, ավանդություն, մետրոպոլիտ, պատմիչ, եկեղեցի, հրաշք:*

Պատմական Սյունիքն իր սահմաններում ընդգրկել է տասներկու գավառ[1], որի ընդհանուր տարածքը կազմել է 15237 կմ² և համարվել Սյունյաց նախարարական տան ժառանգական հայրենիքը[2], որի մի մասն այսօր, ի ցավ սրտի, գտնվում է ՀՀ պետական սահմաններից դուրս: Սյունիքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, աչքի է ընկնում իր գեղատեսիլ բնությամբ և դրանց հետ կապված ավանդազրույցներով: Մեր այս ուսումնասիրությունը փորձ է՝ ներկայացնելու Սյունյաց մետրոպոլիտ և պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկում[3] տեղ գտած պատմական Սյունյաց աշխարհի ավանդությունները, որոնք «բավական նեղ ընդգրկման և փոքր ծավալի ստեղծագործություններ են, հաճախ զուրկ որոշակի սյուժեից, մեկ կամ երկու գործող անձով: Նրանք հորինվում են տարբեր դարաշրջաններում, մեծ մասամբ տեղային նշանակություն ունեցող դեպքերի ու դեմքերի, իրերի ու երևույթների շուրջը: ... Չափազանցությունն ու երևակայականը այստեղ արտահայտված է բավական զուսպ ձևով, պատմական դեպքերի նկարագրությունն ավելի մոտ է իրականին ու հավաստիին»[4]:

Երկում շատ հաճախ են մեջբերված Սյունյաց նահանգի եկեղեցիների և Մետրոպոլիտական Աթոռին վերաբերող նվիրատվությունների ամբողջական

1 Ծղուկ, Վայոց ձոր, Գեղարքունի, Սոթք, Աղահեճ, Հաբանդ, Բաղք, Կովսական, Արեվիք, Ձորք, Երնջակ և Գողթն, Ճահուկ: Տե՛ս, **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 70; **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ, 110:

2 **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 81:

3 Օրբելյանի այս աշխատությունը ունի՝ Փարիզ, 1859, Թիֆլիս, 1910, 1911 և նաև սրանց հաջորդող հրատարակություններ: Մեջբերումները՝ ըստ 1986թ. հրատարակության:

4 **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ ԺԸ:

արձանագրությունները, որոնք ավարտվում են սարսափազդու անեծքներով ու պարտավորեցումներով: Սակայն սրանով հանդերձ՝ պատմիչը պատմությունը ժամանակ առ ժամանակ ընդմիջում է հետաքրքիր ավանդազրույցներով ու հրաշապատում պատմություններով, որոնք էլ դարձել են մեր քննության առարկան:

«Ավանդությունները նպատակային և ճանաչողական բնույթի ստուգաբանական, բացատրական և վարքաբանական ստեղծագործություններ են, որոնք ժողովրդի կողմից ընկալվում են իբրև հեռու և մոտիկ անցյալում եղած ու կատարված իրերի ու երևույթների, դեպքերի ու դեմքերի վերաբերյալ ճշմարտացի հաղորդումներ և հուշապատումներ»[1]:

Մեր ուսումնասիրությունն ընդգրկում է երկում առկա պատմական և ստուգաբանական ավանդություններ, վարքաբանական ավանդազրույցներ:

Պատմական ավանդություններ: Բարդուղիմեոս առաքյալը Պարսկաստանից գալիս է Հայաստան, նախ քարոզում է Սյունիքում և նրա սահմանների մեջ մտնող Գողթնի արևմտյան ծայրամասում, մի ժայռի վրա կառուցում եկեղեցի՝ անվանակոչելով Տյառնընդառաջ[2]: Եվ հիշատակելով Որդվատ գյուղը՝ պատմիչը նշում է, որ այնտեղի ջուրը վնասակար էր և մեծ վնասներ էր հասցնում բնակչությանը: Բարդուղիմեոսն ու իր աշակերտներն աղոթելով ցամաքեցնում են այդ ջրի աղբյուրը, որի տեղը դեռ երևում է[3]:

Միջնադարում հայոց եկեղեցին կարևորում էր Խաչի՝ իբրև տերունական փրկագործական նշանի պանծացումը և առավել սրբացումը հասարակության գիտակցության մեջ, ուստի այն պետք էր հանրահռչակել՝ նրան վերագրելով անգամ անհնարին թվացող հրաշքներ: Օրբելյանը յուրահատուկ ջերմությամբ ու գորովով է խոսում է Արցախից Սյունիք փոխադրված տերունական խաչի մասունքի մասին, որի «մեծամեծ հրաշքների ու զարմանալի սքանչելագործությունների համբավը տարածված էր ամբողջ աշխարհում»[4]: Խաչափայտի այդ սուրբ մասունքը Դլեն իշխանի գյուղ է բերել մի օտարական ճգնավոր: Ձմռանը՝ Աստվածահայտնության ճրագալույցին, հասնելով գյուղ՝ ճգնավորն իջևանում է քահանայի տանը և իր ուսապարկը, որի մեջ Սուրբ Նշանի մասունքն էր, հանձնում է երեցկնոջն ու խնդրում, որ մաքուր տեղ դնի: Տանտիրուհին այն դնում է իր նոր մահացած մանկան սնարի մոտ: Գիշերը մանուկը ս. Նշանի զորությամբ կենդանանում է և կանչում մորը[5]: Ծնողները պատահած հրաշքից կարկամում են, երբ տեսնում են ողջացած մանկանը: Ճգնավորն իմանում է եղելությունը և, վերցնելով իր «հրաշագործ» ուսապարկը, աննկատ հեռանում է գյուղից: Գյուղացիներն իմանալով կատարված հրաշքի մասին՝ գալիս են մանկանը տեսնելու, իսկ Դլեն իշխանը ծառաների ու շինականների հետ սկսում է հետապնդել ճգնավորին: Տեսնելով իրեն հետապնդողներին՝ ճգնավորը տուփից հանում է ս. Նշանը, դնում իր կնգուղի մեջ, իսկ տուփը նետում

1 **Ղանալանյան Ա.**, Ավանադապատում, էջ ԼԳ:

2 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, էջ 76-77:

3 Նույն տեղում, էջ 77:

4 Նույն տեղում, էջ 377:

5 Խաչի՝ հարություն տալու պատմությանը հանդիպում ենք Քրիստոսի խաչափայտի գտնվելու պատմության մեջ. մոտակայքով անցնող թափորը տանում էր թաղելու այրու միևնուճար որդուն: Ստուգելու համար, թե երեք խաչափայտերից որն է Քրիստոսինը, ննջեցյալին հերթով պառկեցնում են խաչերի վրա: Երբ նրան դնում են Փրկչական խաչի վրա, տղան իսկույն կենդանանում է, և տարածվում է խաչափայտի հրաշագործ զորության լուրը:

մացառախիտ անտառի սալորի թփի մեջ ու հեռանում: Հետապնդողները համատարած ձյան մեջ նկատում են գեղեցիկ ծաղիկներով փթթած անուշահոտ տուփը, որի մեջ ոչինչ չգտնելով՝ շարունակում են հետապնդումը: Ճգնավորը, հասկանալով, որ իրեն հանգիստ չեն թողնի, ս. Նշանը նետում է Աղունո գետի մեջ: Հետապնդողները հասնում են ճգնավորին և տեսնում, որ գետը երկփեղկվել է, իսկ մասունքը ցամաք մասում է, որից բորբոքված բոց է ցոլանում դեպի վեր և թանձր ծխի նման զարմանալի բույր է տարածում շրջակայքում: Նրանք երկյուղածությամբ մասունքը հանում են գետից և դնելով տուփի մեջ՝ վերադառնում են գյուղ: Այդ օրվանից մասունքը դառնում է Դլենի տոհմի սեփականությունը: Հետագայում Ջալալ իշխանը Գիշերաձոր անունով եկեղեցի է կառուցում և մասունքը, արծաթե պահարանի մեջ դնելով, ամփոփում այնտեղ, որտեղից էլ որոշ ժամանակ անց նույն տոհմի ներկայացուցիչների ձեռքով խիստ աղքատությունից ու գերեվարման վտանգից դրդված՝ վաճառվում է Նորավանքին[1]:

Կարևորելով IV դարում տեղի ունեցած հայոց եկեղեցու անկախացումը Կեսարիո եպիսկոպոսությունից և քրիստոնեական աշխարհում հանդես գալն իբրև առանձին և ինքնուրույն եկեղեցական Աթոռ՝ Օրբելյանը հիշատակում է պատմական հետևյալ ավանդությունը. երբ Ներսես Մեծին ցանկանում են ուղարկել Կեսարիա ձեռնադրվելու, հայոց Արշակ Բ-ն թույլ չի տալիս՝ ասելով. «Հայաստանը պարտավոր չէ ենթարկվելու Կեսարիայի եպիսկոպոսապետին. թեև մեր առաքյալ Թադեոսը այնտեղ մի եկեղեցի է շինել ու իր աշակերտներից ձեռնադրել եպիսկոպոս, և այս պատճառով էլ այնտեղից ենք ձեռնադրում ստանում, բայց որքա՜ն առավել է մեզ մոտ նույն ինքն առաքյալը ուրիշ երեք առաքյալների[2] հետ, որոնց հանգստարանը, աթոռը, եկեղեցին ու ձեռնադրածները բոլորն էլ այստեղ են. ի՞նչ կարիք ունենք ուրիշ ավելի կրտսերից օրհնություն ստանալու»[3]:

Երկում ուշագրավ է ներկայացված Սյունյաց Անդոկ իշխանի հիշատակությունը, երբ Շապուհը պարսից արքունիքում գտնվող հայ նախարարներից պահանջում է հայոց գահնամակը, իշխանները նրան են ներկայացնում Ագաթանգեղոսի երկը: Նա, ըստ գահնամակի, իշխաններին պատվո բարձեր է շնորհում: Անդոկ իշխանին հասնում է 14-րդ բարձը, որը զայրացնում է նախարարին: Նա ոխակալությամբ լցված թալանում է արքայանիստ Տիզբոնը, քանի դեռ Շապուհը թշնամու անակնկալ հարձակումից գտնվում էր պատերազմի մեջ, և ամրանում Բաղաբերդում: Անդոկը Սյունիքի բնակչությանը հրամայում է եկեղեցիների գրքերն ու սպասքը բերել և պահ տալ Շաղատ գյուղաքաղաքի Սբ. Ստեփանոս եկեղեցուն, իսկ իրենց տներն ու ամբարանոցներն այրել ու ապաստանել լեռներում: Այնուհետև իշխանի հրամանով «թաղում» են սրբությունները ամբարված եկեղեցին՝ թշնամու ավարին ու ավերին չենթարկելու համար: Պատերազմից վերադառնալով՝ Շապուհը հարձակվում է Սյունիքի վրա: Պարսիկ զինվորները, հասնելով «թաղված» եկեղեցուն, փորձում են բա-

1 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, էջ 377-379:

2 Մյուս երեք առաքյալներ ասելով ի նկատի է ունեցել Բարդուղիմեոս և Անանիա առաքյալներին, որոնք թաղված են բուն Հայաստանում, և Հակոբոսին՝ Տյառնեղբայր կոչվածին, որի հանգստարանն ու դրա վրա կառուցած եկեղեցին Երուսաղեմում է և հանդիսանում է Երուսաղեմի հայոց պատրիարքի առաջնորդանիստը:

3 Նույն տեղում, էջ 77:

ցել հողաթումբը, սակայն նույն պահին երկրաշարժ է լինում, ու պարսիկները, ցած գլորվելով, կոտորվում են: Երեք անգամ Շապուհը հարձակվում է Սյունիքի վրա, պաշարում Բաղաբերդը, սակայն բոլոր հարաձակումներն էլ ավարտվում են պարտությամբ: Տեսնելով իրենց անզորությունը՝ պարսիկ իշխանները շահին խնդրում են դադարեցնել հարձակումները Սյունիքի դեմ: Իսկ արիասիրտ Անդոկ իշխանը իր հետ վերցնելով անհամար հարստություն, անցնում է Բյուզանդիա՝ մեծ ընդունելություն գտնելով հունաց Թեոդոս կայսեր կողմից և այնտեղ էլ վախճանվում է՝ սյունյաց տան ժառանգությունը թողնելով իր որդի Բաբիկին:

Բաբիկը հոր մահից հետո որոշում է գալ Հայաստան և տեր կանգնել իր տոհմիկ ժառանգությանը: Նա գնում է Պարսկաստան և ծառայության անցնում մի պարսիկ զորականի մոտ և բազում քաջագործություններ կատարում՝առանց բարձրաձայնելու իր ով լինելը: Այդ ժամանակ Հոնագուր անունով մի հոն Շապուհին հրավիրում է մենամարտի: Այդ հոնը հսկա էր[1] և սարսափ էր տարածում իրեն նայողների վրա: Շապուհին մատնացույց են անում Բաբիկին՝ հավատացնելով, որ նա կարող է հաղթել հոնին: Շահը վարազագիր մատանիով հաստատում է արքայական պատվի վճիռը և Բաբիկին խոստանում մեծ պարգևատրում: Հայ պատանին ընդունում է մարտահրավերը և զինավորվելով կանգնում հսկայի առաջ: Հաղթելով հսկա հոնին՝ շահի խոստման համաձայն ստանում է իր տոհմիկ ժառանգությունը: Այստեղ ուշագրավ է Բաբիկի առաջին խնդրանքը. երբ Անդոկն ապստամբում է շահի դեմ և պարտության մատնում պարսից զորքին, Շապուհը հրամայում է պալատում հնոցի մոխրով լի սանդ դնել և ծեծելիս ասել. «Սյունյաց տերերի նախապատիվ գահակալությունը այս մոխրի հետ թող ցած թափվի, այդպես էլ՝ նրանց կյանքն ու մտադրությունները»: Բաբիկը նախևառաջ շահից խնդրում է այդ սանդը վերացնել, ինչը նույն պահին կատարվում է[2]:

Հետաքրքրական է Շաղատի Սբ. Ստեփանոս եկեղեցու ավանդազրույցը[3], որն ընդելուզված է ժողովրդական պատկերացումներով. Բաբիկը հասնում է հայրենի աշխարհը, սկսում է շրջել և ծանոթանալ գավառների ու բնակչության որպիսությանը: Նա հասնում է Շաղատ և դիմում արևելյան կողմի բլուրը: Հենց այդ ժամանակ բլրից մի եղջերու է դուրս գալիս և փախչելով իրեն գցում է եկեղեցաբլուրը: Բաբիկը հետապնդում է եղջերուին և նրա հետևից բարձրանում եկեղեցաբլուրը: Իշխանի ձիու ոտքերը խրվում են եկեղեցաբլրի մեջ, իսկ եղջերուն աներևութանում է[4]: Երբ ձիուն հանում են թաղված տեղից, ոտնահետքերից անուշահոտություն է բուրում և տարածվում գավառաձորում: Բաբիկը հրամայում է քանդել բլրահողը, որի տակից իր շքեղությամբ հառնում է Սբ. Ստեփանոս եկեղեցին: Այդ օրը սահմանվում է Սյունյաց աշխարհի Մայր Եկե-

---

1 Այս առասպելը հանդիպում ենք և Աստվածաշնչում, ուր Գողիաթ անունով հսկան ծաղրում է Իսրայելի բանակին և սպանվում պատանի Դավթի պարսատիկից արձակած քարով: Տե՛ս, Աստուածաշունչ, Թագավորներ Ա, գլ. 17, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2011, էջ 340-342:

2 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, էջ 86-88:

3 Այս ավանդազրույցի փոփոխակը տե՛ս **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, էջ 78:

4 Այս հավատալիքը կենցաղավարում է հայոց մեջ և որոշ դեպքերում եղնիկը հանդես է գալիս որպես մարդու կերպափոխվող կերպար: Այս առասպելաբանական պատկերացումը կա նաև հայոց վիպական բանահյուսության մեջ: Տե՛ս **Մօքու**, Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, 1896, էջ 77; **Զաքարյան Ե.**, Եղնիկ աղջկա մոտիվը հայկական հեքիաթներում, «Ոսկե դիվան», պրակ 4, Երևան, 2012-2013, էջ 81-89:

ղեցու օր: Եկեղեցում ժամերգություն է կատարվում և բազմաթիվ հրաշքներ ու բժշկություններ են լինում: Տեսնելով կատարված հրաշքները՝ այդտեղ գտնվող Գոր և Գազան պարսիկ եղբայրներն իրենց գնդերի հետ միասին մկրտվում են՝ դառնալով քրիստոնյա[1] և հաստատվում Հայաստանում:

Քանի որ պատմիչ Օրբելյանը հոգևորական էր, իր երկում շատ է կարևորել քրիստոնեության հանրահռչակումը, ուստի բոլոր հնարավոր միջոցներն օգտագործել է կրոնական ավանդապատումները ներկայացնելու և դրանցով արժևորելու հավատքի համար մեռնելը՝ նահատակներին ներկայացնելով որպես սրբեր և Աստծու սիրելիներ. Պարսից զորքը, Ավարայրի ճակատամարտից հետո, երբ Հայոց երկիրը մնացել էր անիշխան, հալածելով փախստականներին ու նահանջող զորականներին, շատերին կոտորում է: Հերթական կոտորածից հետո, երբ պարսիկ զորականները բանակում են հանգստանալու, գիշերը դետքին երևում է. «երկինքը բացված և ուժեղ լույս սփռված սպանվածների վրա ու մի ոսկեղեն կառք, խիստ բարձր՝ վրան նստած մի կին՝ թագավորական ծիրանի զգեստներով, հրեշտակների հսկայական զորախմբերով շրջապատված: Նա նայում էր կոտորածին, ողբագին լալիս ու գգվում ընկածներին մեկ առ մեկ: Եվ այն պարսիկը զարհուրելով կամեցավ իմաց տալ իրենց զորքին, բայց ոտքերն ու լեզուն կապվեցին: Ապա մեկը սրբերի զորախմբերից մոտեցավ նրան, և նա հարցրեց՝ այդ ո՞վ է: Իսկ հրեշտակն ասաց. «Դա երկնային թագավորի մայրն է՝ որ իջել է նահատակների ու իր որդու սիրելիների մոտ և ուզում է մեկ առ մեկ փառաբանել նրանց»: Այդ տեսարանը մնաց մինչև առավոտ ու աներևութացավ»[2]: Իսկ պարսիկ զորականը դառնում է քրիստոնյա և մինչև իր կյանքի վերջը ծառայում սրբերին ու թաղվում նահատակվածների հետ: Նահատակների ոսկորներն ամփոփելով՝ մեծ վկայարան են կառուցում, որը հետագայում ավերվում է, իսկ տեղանքը վերածվում է բնակատեղիի և կոչվում Խոտորալեզ: Պատմիչը վերջում, հավաստի դարձնելու համար այս տեղեկությունները, հավելում է. «Ահա այս ամենն իմացանք իր արձանագրություններից, մի մասն էլ՝ գրքերից, տեղերի ու նահատակների անուններից, հավաստի հին ավանդություններից»[3]:

Պատմիչը ավանդություններն օգտագործում է ոչ միայն քրիստոնեությունը գովաբանելու և կրոնական զգացմունքներ ալիքելու համար, այլև ցույց տալու անհեռատես քայլերի աշխարհակործան հետևանքները. Բաղաց Սենեքերիմ արքան գնում է Սպահան՝ Մելիքշահ սուլթանին տեսության, որի կողմից մեծարվում ու պատվի են արժանանում է: Սուլթանի սիրելի ծառան՝ Չորթմանը, որը մատռվակություն էր անում, ճաշի ժամանակ գինով նեղում է Սենեքերիմին: Վերջինս կատակով մեծ պարգևներ է խոստանում, նաև խոստանում է իր աղջկան կնության տալ նրան: Չորթմանն իրենց սովորության համաձայն հանգույց է դնում Սենեքերիմի գոտու վրա և ցույց տալիս սուլթանին: Որոշ ժամանակ անց, երբ Չորթմանը հասնում է բարձր դիրքի և իշխանության, Սենեքերիմից պահանջում է խոստացված աղջկան: Հայոց արքան ծաղրում է նրան և ցույց տալիս պահանջի կատարման անհնարինությունը: Չորթմանը, ոխ պա-

1 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, էջ 89-90:
2 Նույն տեղում, էջ 107-108:
3 Նույն տեղում, էջ 109:

հելով Սենեքերիմի դեմ, տարիներ անց հարմար պահի հարձակվում է Բաղաց թագավորության մայրաքաղաք Կապանի վրա՝ ավերի ու սրի մատնելով այն: Այնուհետ իրար հետևից ավերում ու գրավում է Բաղաց ամբողջ երկիրը՝ վերջ դնելով Բաղաց թագավորությանը[1]:

Արդարացնելով և խրախուսելով եկեղեցիների կառուցումը և միաբանությունների հիմնումը՝ որպես աստվածահաճո գործ, պատմիչը առանձնահատուկ նրբանկատությամբ է մեջբերում պատմական Սյունիքի սահմաններում գտնվող վանքերի կառուցման հետ առնչվող ավանդազրույցները. Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսը վանական եղած ժամանակ Սևանա կղզում բազում ճգնություններից հետո երազ է տեսնում, ուր լճի վրայով նրա մոտ են գալիս տասներկու առաքյալները, ցույց տալիս կառուցվելիք եկեղեցու տեղը և հրամայում միաբանություն հիմնել: Առաքելոցի, ինչպես և Սբ. Աստվածածին եկեղեցիների կառուցումն իրականացվում է Սյունյաց իշխանուհի Մարիամի նվիրատվությամբ[2]:

Տաթևի վանքի Պողոս-Պետրոս եկեղեցի: Հովհաննես եպիսկոպոսը[3] Սյունյաց մետրոպոլիտ օծվելուց հետո մտմտում է վերանորոգել Տաթևի վանքը, սակայն ելք չի գտնում, որովհետև իրենից առաջ գահակալած եպիսկոպոսների կողմից կառուցված եկեղեցիները, որոնք արդեն կիսախարխուլ էին, չէր ցանկանում քանդել: Քանի դեռ այս մտորումների մեջ էր, երազում հրեշտակից հրաման է ստանում հինը մի կողմ դնել և ձեռնարկել նոր եկեղեցու շինարարությունը՝ Պետրոս և Պողոս առաքյալների անունով: Հրեշտակը իր գավազանով սահմանագծում[4] է կառուցվելիք եկեղեցու տեղը՝ հավաստելով, որ դա երկնային Տիրոջ կամքն է: Եկեղեցու կառուցմանը աջակցում են Սյունյաց իշխանները, իսկ վանքում պահվող Պողոս և Պետրոս առաքյալների նշխարները, ինչպես և այլ սրբերի մասունքներ դրվում են եկեղեցու հիմքերի ու սյուների տակ[5]: Եկեղեցու և հարակից շինությունների ավարտից հետո նավակատիքին հրավիրվում են հայոց Սմբատ արքան, Հայոց և Աղվանից աշխարհի կաթողիկոսները, երևելի իշխաններն ու հոգևորականները: Գիշերային արարողության ժամանակ Հովհաննեսը տեսիլքով տեսնում է Պետրոսին՝ ձեռքին երկաթե բանալի, և Պողոսին՝ գրկում առաքելական գիրքը: Նրանք, եկեղեցի մտնելով, գիրքն ու բանալին հանձնում են եպիսկոպոսին, ասելով. «Տերը հաճեցավ բնակվել սրա մեջ...»[6]:

Ստուգաբանական ավանդություններ: Պատմիչ Ս. Օրբելյանը, գրելով Սյունյաց աշխարհի սահմանների մասին, ուշագրավ կերպով անդրադառնում է գավառների անունների ծագմանը, որոնց հետ կապված ժողովրդական ավանդությունները կենցաղավարող էին իր ժամանակներում, չնայած նրան, որ դրանք համարում է «հների դատարակաբանական առասպելներ»[7]: Բաղք. ծագում է Սիսակի սերունդներից Բաղակ անունով մեկի անունից, Երնջիկը ծա-

1 Նույն տեղում, էջ 277-279:

2 Նույն տեղում, էջ 175:

3 Սա Հովհաննես Ե մետրոպոլիտն է (մոտ 885-918թթ.), որը հաջորդել է Սողոմոն Բ-ին:

4 Սա զուգահեռ է Գրիգոր Լուսավորչի տեսիլքին, երբ Քրիստոսն ինքնէ իջնում և ոսկե կռանի հարվածով ցույց տալիս կառուցվելիք եկեղեցու տեղը: Այս պատկերացումը պահպանված է նաև «Սասնա ծռերում», ուր Դավիթը որսասարում տեսնելով հոր գերեզմանը, որից լույս էր բխում, իր նիզակով գծում է իրեն տեսլացող եկեղեցու տեղը:

5 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, էջ 206-208:

6 Նույն տեղում, էջ 209:

7 Նույն տեղում, էջ 72:

գում է նույն Սիսակի սերունդի նահապետներից մեկի կնոջ՝ Երնջիկի անունից, ով կառուցել է Երնջակ ամրոցը: Պատմիչը անդրադարձել է Նախկորզան բնակավայրի[1] ստուգաբանությանը. «Բաբիկը, անցնելով Երասխ գետը, կառուցում է մի գյուղաքաղաք և անունը կոչում Նախկորզան, որ նշանակում է «նախ այն կորզելով իրեն վերցրեց իր հայրենիքից»»[2]:

Ս. Օրբելյանը Վայոց ձոր անվան ստուգաբանությունը կապում է Սյունեցու սպանությանը հաջորդած քառասնօրյա երկրաշարժի հետ, որի ժամանակ կործանվել են բազմաթիվ շեներ և մոտ տասը հազար մարդ ողջ-ողջ թաղվել է գետնի տակ[3]:

Հետաքրիր է նաև Թանահատի վանքի[4] անվան ստուգաբանությունը, որը, ըստ Օրբելյանի ներկայացրած ժողովրդական ստուգաբանության, այդպես է կոչվել այնտեղ ապրող միաբանների խիստ ճգնակեցության պատճառով, որոնք անգամ թան չեն գործածել[5]:

Վարքաբանական ավանդազրույցներ: Սյունյաց նախարարական տոհմի ծագումը պատմիչը սկսում է իրենց նախնի Սիսակից՝ տեղեկությունը վերցնելով Քերթողահոր աշխատությունից[6]: Որպեսզի հանրահռչակվեն քրիստոնյա սրբերը և համապատասխան ծեսերով պատվվեն հասարակության կողմից, Օրբելյանը մյուս հոգևորականների պես այս կամ այն սրբին և նրանց գերեզմաններին վերագրում է հրաշապատում զորություններ՝ օգտվելով հասարակության մեջ շրջանառվող ավանդազրույցներից:

Բարդուղիմեոս առաքյալի աշակերտ **Լուսիկը** վախճանվել և թաղվել է Վանանդ գյուղում[7]: Ըստ ավանդության նրա գերեզմանի վրա մի փոքրիկ մատուռ են կառուցել, որտեղ մեծ հրաշքներ ու բժշկություններ են կատարվել, իսկ գերեզմանի հողը կատաղիներին հնազանդության է բերել[8]:

Շաղատի եկեղեցու վանական **Տիրոտ քահանան**, որը առաքինի վարքով և հրաշագործ հավատքով էր, խոսքի իշխանություն ուներ մարդկանց, կենդանիների ու տարերքների վրա[9] և իրեն էր հպատակեցնում չարին. «Գետի մի կողմում մի ջրաղաց կար: Երանելի Տիրոտը, ջրառատ տեղերով, միշտ խաչակնքվելով, աներկյուղ անցնում էր գետը: Օրերից մի օր տեսավ ցանկալի ու գեղեցկատես մի ջահել էշ և իր մտքում ասաց. «Գնամ, այն իշով անցնեմ գետը»: Եվ նստեց էշն ու մտավ գետը: Գետի մեջ էշը նրան դառնալով փայլատակումով ցույց տվեց իր երկաթե ատամները և ասաց. «Դու իշի այսպիսի ատամներ տեսե՞լ ես»: Իսկ նա, պատյանից հանելով իր փոքրիկ դանակը, ցույց տվեց և ասաց. «Իսկ դու իշի այսպիսի մտրակ տեսե՞լ ես. Ինձ անցկացրո՛ւ գետը, եթե

1 Բնակավայրի տեղագրությունը տե՛ս **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 72:

2 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, էջ 88:

3 Նույն տեղում, էջ 155:

4 Թանահատ անվամբ գոյություն է ունեցել երկու վանք՝ մեկը Վայոց ձորում, Եղեգնաձորի շրջանում, Վերնաշեն գյուղի մոտակայքում, մյուսը՝ Սիսիանի շրջանում: Այս վանքերը կոչվել են նաև Թանահտի վանք, Թանահատաց վանք, Թանատաց վանք, Թանահատավանք: Տե՛ս ՀՏԲ, հ. 2, Երևան, 1988, էջ 408; Դիվան հայ վիմագրության, պրակ II, Երևան, 1960, էջ 94- 96, պրակ III, Երևան, 1967, էջ 71-73:

5 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, էջ 155, 167:

6 **Խորենացի Մ.**, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 92:

7 Այս գյուղը գտնվում է Երնջակ գավառում:

8 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, էջ 77:

9 Նույն տեղում, էջ 90-91:

ոչ՝ կխփեմ, կվիրավորեմ քեզ»: Եվ սրբին անցկացնելով գետը՝ չար սատանան աներևութացավ»[1]:

Իր մահից հետո Տիրոտը թաղվում է Շաղատի եկեղեցու արևելյան կողմում: Նա օրենք է սահմանում՝ կանանց և ամուսնացյալ քահանաներին չմտնել եկեղեցի[2]:

Պատմիչը հիշատակում է Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը Սյունիքում. «Եվ այնքան հալածեց դևերի բազմությանը, որ մարմնավոր տեսքով ծխի նման ծառանալով՝ վայնասունով ու աղաղակով փախուստ տվեցին. Երասխն անցնելով ընկան Մարաց կողմերը»: Հնարավոր է, որ ժողովրդական պատկերացումներում Մարաստանը, լինելով կրակապաշտ, համարված լինի չարի բնակատեղի, ուր դիմել են սրբի կողմից հալածված դևերը:

Մյուս վարքապատումը, որը գտնում ենք պատմիչի երկում, վերաբերում է սյունյաց մետրոպոլիտ **Երիցակի** ձեռնադրությանը[3], որը Օրբելյանը պատմում է կրոնական խանդավառությամբ ու անթաքույց հիացմունքով: Սակայն մենք այստեղ ցանկանում ենք կարճառոտ հիշատակել պատմիչի գրառած, ավանդաբար պատմված մի զրույցը Երիցակի մասին, որը Երուսաղեմում եղած ժամանակ Ս. Ծննդյան ճրագալույցին Բեթղեհեմի այրի դռանը հիշում է իր եղբայր վանականներին և ցանկանում այդ պահին նրանց հետ լինել Երիցավանքում: Այդ պահին նրան է հանդիպում մի կախարդ կին և փոխօգնություն առաջարկում. սուրբը պիտի Աստծուց ներում խնդրեր այդ կնոջ մեղքերի համար, իսկ կինը կօգներ նրան նույն պահին հասնելու Երիցավանք: Երիցակը կատարում է կնոջ խնդրանքը, իսկ կինը ջրով լի անոթ է պատրաստում և հարմարեցնելով սրբին՝ նստեցնում է վրան: Նույն պահին Երիցակը հայտնվում է վանքում՝ իր եղբայրակիցների կողքին: Պատարագից հետո նա վանականներին հայտնում է եղելությունը և, ի հավաստումն իր խոսքերի, ցույց տալիս այնտեղից իր հետ բերածը: Եվ միաբանությունը գիշերային ժամերգության արարողությամբ թողություն է խնդրում այդ կնոջ համար: Աստված տեսիլքով Երիցակին հայտնում է, որ ներել է այդ կնոջը[4]:

Օրբելյանն իր շարադրանքում հաճախ է մեջբերում հոգևորական այրերի վարքապատումները, որոնք առավել շեշտադրում են աստվածահաճո կյանքով ապրելու երանությունն ու ճգնակենցության կարևորությունը: Այդ վարքապատումների նպատակն է քրիստոնյաների մեջ բորբոքել կրոնասիրությունն ու կայուն պահել հավատարմությունը դեպի Հայոց Եկեղեցին: Դրանցից է պատմիչի կողմից յուրահատուկ ջերմեռանդությամբ հիշատակած Սյունյաց մետրոպոլիտ **Ստեփանոսի** վարքը[5], որում ներկայացվում է ոչ միայն երկրային իրադարձությունները, այլև՝ երազի միջոցով ցույց տրված երկնայինը, որը տեղի է ունենում սրբի մահից հետո: Սա կրոնական կատարածաբանական պատկերացումների գեղեցիկ շարադրանք է, որն իր աստվածաբանական բնույթով հասարակ ընթերցողին հասանելի է դարձնում մահվանից հետո շարունակվող

1 Նույն տեղում, էջ 90-91:

2 Կանանց՝ եկեղեցի մտնելու արգելքը կա նաև Ս. Կարապետի անունը կրող վանքերի վերաբերյալ՝ ի նշան Սալոմեի կողմից Հովհաննես Մկրտչի գլխատվելու:

3 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, էջ 109-112:

4 Նույն տեղում, էջ 112-113:

5 Նույն տեղում, էջ 147-156:

հավիտենական կյանքի փիլիսոփայությունը և դրդում քրիստոնեական օրենքներով ապրելու: Ստեփանոսի վարքը կրոնական բնույթի փոքրիկ վիպապատում է, ինչպիսին տեսնում ենք Գրիգոր Նարեկացու, Մեսրոպ Մաշտոցի և այլոց երկերում:

Եղեգյաց գավառի Մոզ ավանում բնակվում էր մի անբարո կին, որն իր վարքի պատճառով երեք անգամ զգուշացվել էր Ստեփանոս եպիսկոպոսից, բայց շարունակում էր անառակությամբ ապրել՝ առանց զղջալու: Իր վերջին այցի ժամանակ եպիսկոպոսը, տեսնելով կնոջ անզգամությունը, մեծ պատժի վճիռ է արձակում: Կինն էլ, փորձելով վրեժխնդիր լինել Ստեփանոսից, սիրեկանին ստիպում է սպանել նրան: Երբ կնոջ սիրեկանը բարձրանում է ծառը՝ սպանելու այնտեղ դրված մահճում ննջող եպիսկոպոսին, տեսնում է, որ շունչը բոցի[1] նման վեր է ցոլանում և մի հրեշտակ նրան հով է անում: Սիրեկանը վախեցած մի կերպ իջնում է ծառից, բայց կնոջ դրդմամբ կրկին բարձրանում ծառը և ավելի հրաշափառ տեսարան տեսնելով՝ ուշաթափ ընկնում է ծառից: Զայրացած կինը ինքն է սուրը վերցնելով բարձրանում ծառը և սպանում[2] եպիսկոպոսին: Սիոնի մենաստանի Նու անունով մի ճգնավոր երազ է տեսնում, որտեղ հրեշտակները սպանված Ստեփանոսին բարձրացնում են երկինք ու կանգնեցնում Աստծու աթոռի առաջ, որի վրա նստած էր Քրիստոսը: Սուրբը, Քրիստոսին ցույց տալով արյամբ լի գոգը, վրեժխնդրությունը հանձնում է նրան: Իսկ առաքյալներն ու հայրապետերը նրան տանում են իրենց կայարանը՝ մինչև հատուցման օրը[3]: Այնուհետև Նուն, հավաքելով միաբաններին, պատմում է իր երազը և հորդորում աղոթքներով մեղմել Աստծու բարկությունը: Բայց այդ նույն ժամանակ թանձր խավարը պատում է գավառը և քառասուն օր շարունակ երկրաշարժ է լինում, որի ժամանակ ավերվում է նաև Մոզ ավանը: Պատմիչն այս իրադարձությունը կապում է Ստեփանոսի եղերական սպանության և Աստծու բարկության հետ: Ստեփանոսի մարմինն ամփոփում են Թանահատի վանքում և հետագայում գերեզմանի վրա կառուցում գմբեթահարկ եկեղեցի: Իսկ տիրասպան կինը որոշ ժամանակ անց դառնում է սգավոր և իրեն դաժան կտտանքների ենթարկելով՝ ապաշխարում՝ ներողություն խնդրելով սրբից: Մի օր Պատարագի ժամանակ ձայն է դուրս գալիս Ստեփանոսի գերեզմանից. «Թող ներվեն քո մեղքերը, ո՜վ կին»[4]: Ներվելուց հետո էլ կինը կիսաթաղ վիճակով մնում է եկեղեցու դիմաց և կնքում իր մահկանացուն՝ թաղվելով իր իսկ ապաշխարության փոսի մեջ[5]:

Պակաս ուշագրավ չէ Ծղուկ գավառի Թանահատի վանքի վանահայր Մխի-

1 Այս ժողովրդական պատկերացումը, որ նաև լույսի տեսքով է հանդես գալիս, տեսնում ենք նաև հայ վիպական բանահյուսության մեջ, իսկ հեքիաթում հերոսն այն վերագրում է մեռոնին: Տե՛ս, **Մաքոս**, էջ 69, ՀԺՀ, հտ. XVII, Երևան, 2012, էջ 85:

2 Կնոջ կողմից սրբի սպանվելու դրվագը տեսնում ենք նաև Աստվածաշնչում, ուր Հերովդիան իր աղջկա միջոցով սպանել է տալիս Հովհաննես Մկրտչին: Տե՛ս Աստուածաշունչ, Մատթէոս, գլ.14:1-12, էջ 22; Մարկոս, գլ. 6:17-29, էջ 54-55:

3 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն, էջ 153-154:

4 Գերեզմանից ձայնելը և ինչ-որ բան հայտնի դարձնելու ժողովրդական պատկերացումն ու հավատալիքը առկա է նաև «Սասնա ծռերի» Փոքր Միհրի ճյուղն ունեցող բոլոր պատումներում, որոնցում Դավիթն ու Խանդութը, խոսելով իրենց որդու հետ, խորհուրդ են տալիս փակվել Ագռավաքարում: Անդրշիրիմում շարունակվող կյանքի հավատալիքը առկա է ոչ միայն հայ, այլև գրեթե բոլոր ժողովուրդների առասպելաբանական մտածողության մեջ և ցուցում է բոլոր ժամանակներում հոգու անմահության մասին կենցաղավարող պատկերացումները, որոնք առավել վառ ու պատկերավոր են արտահայտված քրիստոնեության մեջ:

5 **Ս. Օրբելյան**, Սյունիքի պատմություն, էջ 154-156:

թարի մասին պատմվող ավանդազրույցը, որի իրական լինելը հաստատելու համար արձանագրվել է եկեղեցու պատին: Ըստ ավանդության` այս վանահայրը իրեն է հնազանդեցրել վայրի գազաններին: Վերջիններս խոնարհաբար ծառայել են եկեղեցուն և վանահայրն էլ լսել է նրանց կարիքները. «Եւ էր եղեալ հայր վանիցն որոյ անուն Մխիթար. որ անցեալ էր ճգնութեամբ ընդ բոլոր հոյլս առաքինաց, և զգազանս վայրենիս, զարջս և զգայլս աճէր ի հնազանդութիւն սուրբ եկեղեցվոյն և ծառայեցուցանէր վանիցն, զոր արձանն եցոյց եթե արար հարկատու մեքորայ[1], այսինքն եկեղեցւոյս»[2]: Մխիթարի վախճանվելուց հետո նրա մարմինն ամփոփում են վանքի մոտ գտնվող բլուրում, իսկ գերեզմանը հիվանդների համար դառնում է բժշկարան[3]:

Պատմիչը հիշատակում է Բաղաց Հասան իշխանի որդի Կապանեցի Հովհաննեսին, որը եղել է եպիսկոպոս` հռչակված իր առաքինություններով: Բաղաց աշխարհի ավերումից հետո հաստատվել էր Վայոց ձոր գավառի Հրասեկաբերդի մոտ գտնվող Ս. Կարապետ եկեղեցում (Նորավանք): Հալածվելով Հրասեկի ամիրայից, որը այլազգի էր, պարսիկի անվան տակ ծպտված գնում է Սպահան` սուլթանի քաղաքը: Այդ ժամանակ սուլթանի միամորիկ որդին մահամերձ հիվանդ էր, և ամբողջ արքունիքը` սգի մեջ: Սուլթանի մայրը երազում տեսնում է, որ իրենց քաղաք եկած օտարականը հայ եպիսկոպոս է, և որ միայն նա կարող է բուժել մանկանը: Հովհաննեսին գտնում, տանում են պալատ: Նրա աղոթքով կիսամեռ մանուկը կյանք է վերադառնում: Սուլթանը եպիսկոպոսից հարցնում է իր երկիր գալու պատճառը: Հովհաննեսը պատմում է Հրասեկաբերդի և Անապատ բերդի ամիրաների հալածանքների մասին: Սուլթանը եպիսկոպոսին երախտահատույց լինելու համար պատժում է այդ երկու ամիրաներին, նրանց ամբողջ տարածքը և ունեցվածքը հանձնում Հովհաննեսին` որպես եկեղեցու սեփականություն: Այդ եպիսկոպոսի անվան հետ շատ հրաշագործություններ են կապված, որոնցից է նաև հետևյալը. Տխարբ գյուղից մի կին իր ծծկեր մանկան հետ ընկնում է վանքի դիմացի քարաժայռից: Սուրբը տեսնելով խաչակնքում է, և մայրն ու մանուկը ողջ-առողջ վերադառնում են տուն` ասելով. «Տեր-Հովհաննեսը կանգնել էր ժայռի տակ և երկու ձեռքով բռնելով` մեզ փրկեց»[4]: Իր մահից հետո Հովհաննեսը թաղվում է իր աղոթարանում, իսկ նրա գերեզմանից մեծ զորություն է բխում. ոչնչացնում է մուկն ու թրթուռը, բուժում մարդուն, անասունին ու հանդերին հասած վնասները:

Ամփոփելով այս ուսումնասիրությունը` նկատենք, որ Սյունյաց մետրոպոլիտ և պատմիչ Ստեփանոս Օրբելյանն իր երկում օգտագործել է առավելապես կրոնական ավանդազրույցներ և վարքաբանություններ` ջատագովելով Հայոց Եկեղեցին և պանծացնելով քրիստոնեությունը` իբրև միակ ու ճշմարիտ դավանանք:

---

1 Նշանակում է եկեղեցի: Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, ՀԲԲ, հ. III, Երևան, 1944, էջ 313:

2 Մխիթարի մասին վանքի հարավային ավանդատան պատի արևելյան անկյունի կիսափուլ մասում և դրա տակ ընկած երեսպատման ավելի մեծ քարի վրա պահպանված է սույնը փաստող արձանագրությունը, որը ամբողջությամբ մեջբերել է Օրբելյանը, և որը հաստատել և իր ուսումնասիրության մեջ նույնությամբ զետեղել է Ս. Բարխուդարյանը: Տե՛ս **Ս. Օրբելեան**, Պատմութիւն տանն Սիսական, Թիֆլիս, 1912, էջ 161; Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 95-96:

3 **Օրբելյան Ս.**, Սյունիքի պատմություն,էջ 167:

4 Նույն տեղում, էջ 288-289:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստուածաշունչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2011:
2. Դիվան հայ վիմագրության, պրակ II, Երևան, 1960:
3. Դիվան հայ վիմագրության, պրակ III, Երևան, 1967:
4. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963:
5. Զաքարյան Ե., Եղնիկ աղջկա մոտիվը հայկական հեքիաթներում, «Ոսկե դիվան», պրակ 4, Երևան, 2012-2013:
6. ՀԺՀ, հտ. XVII, Երևան, 2012:
7. ՀՏԲ, հ. 2, Երևան, 1988:
8. Ղանալանյան Ա., Ավանադապատում, Երևան, 1969:
9. Մ. Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968
10. Մօքոս, Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, 1896:
11. Ստ. Մալխասեանց, ՀԲԲ, հ. III, Երևան, 1944:
12. Ստ. Օրբելեան, Պատմութիւն տանն Սիսական, Թիֆլիս, 1912:
13. Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986:

SIRANUSH ARAQELYAN - RELIGIOUS AND FOLK TRADITIONS IN STEPANOS ORBELYAN´S «HISTORY OF THE PROVINCE OF SYUNIK´´ - While working at his literary composition, the metropolitan and historian of Syunik, Stepanos Orbelyan, has widely used the historical and etymological daily and behavioral traditions that were mostly of religious nature and connected to a church, historical personalities or events, widespread among people of native region. Being a clergyman, Stepanos Orbelyan presents everything from the point of view of the church and religion, stressing the importance of faithfulness and devotion shown by an individual to the church and Christianity. This literary composition may be entirely considered as the history of the Metropolitan diocese of Syunik rather than of Syunik region. Given this fact, the «History of Syunik», written by Orbelyan, is valuable from the point of view of folklore and particularly of research of genre of tradition.

Key words: Syunik, tradition, metropolitan, historian, church, wonder.

СИРАНУШ АРАКЕЛЯН - РЕЛИГИОЗНО-НАРОДНЫЕ ТРАДИЦИИ В ТРУДЕ СТЕПАНОСА ОРБЕЛЯНА «ИСТОРИЯ ГУБЕРНИИ СИСАКАН» - При написании своего произведения, Сюникский митрополит и историк Степанос Орбелян широко использовал исторические и этимологические традиции, бытовые среди людей, а также поведенческие традиции которые в основном религиозного характера и связаны с той или иной церковью, историческим лицам или событиям. Будучи священником Степанос Орбелян представляет и интерпретирует все с точки зрения церкви и религии, подчеркивая важность верности и преданности человека церкви и христианству. Данное произведение вполне возможно рассмотреть как историю Сюникской митрополии чем Сюникского нагорья. Со всем этим «Сюникская история» Орбеляна ценна в частности с точки зрения изучения традиции.

Ключевые слова: Сюник, традиция, митрополит, историк, церковь, чудо.